Գ.

ԴԱՒԻԹ

Դառնամ զողորմին կ'տամ էն սուրբ Մելքսէթ քհանին[1],
Ալա տգեղ քահանին.
Դառնամ զողորմին կ'տամ էն Սանասարին, Բաղդասարին,
Սանասարին, Բաղդասարին.
Դառնամ զողորմին կ'տամ էն Զէնով-Ցովանին.
Դառնամ զողորմին կ'տամ էն Մհերին.
Դառնամ զողորմին կ'տամ ընու յիշատակ Դաւթին[2]։

Մհեր[3]) զինքն էր ուր կնիկ, տալ[4]) տղայ չէր էլի[5])։

---

[1]) Բ. վարիանտում ողորմին այսպէս է.
«Օղորմի տը տամ՝ օղորմի Սանասարին, Բաղդասարին.
Օղորմի տը տամ՝ օղորմի ճիւչ Խաթիւնին.
Օղորմի տը տամ՝ օղորմի ճիւչ Մհերին.
Օղորմի տը տամ՝ օղորմի Զէնով-Ցեովանին.
Օղորմի տը տամ՝ օղորմի Ցռան-Վերգոյին.
Օղորմի տը տամ՝ օղորմի Թուլան Դաւթին.
Օղորմի տը տամ՝ օղորմի էն տան ճիւչին, պզտկին.
Օղորմի տը տամ՝ օղորմի ականջ էրողին։

[2]) Այս կտորը երգում էր Մոկացի Ցեովանը, վարիանտիս պատմողը։

[3]) Ա. վարիանտում Մհերի տեղ Սանասարն է յիշուած, բայց կարծում եմ դա պատահական սխալ պիտի լինի, որովհետև, որքան յիշում եմ, երբ պատմողին հարցուփորձ էի անում, Դաւիթը Մհերի որդին համարեց և ոչ Սանասարի։

[4]) Դեռ ևս։ [5]) Բ. վարիանտը այսպէս է սկսւում. «Խաղանք ճեռղէ ճեռղ, կեանք, դադրինք վեար Դաւթը ճեռղին»։